

խանորդը, Հաննէ, եւ Կոլոտի աշակերտ Թովմաս եւ Կուտինայի Առաջնորդ Մարտիրոս վարդապետները:

1726. — Կոլոտ վերաշինեց Օրթագիւղի Ս. Աստուածածին Եկեղեցին: Օծման կը նախագահէ Կարապետ Կաթողիկոս եւ Երէմիէ: Բլէ-Խնէրով կը վաւերացրնէ Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութիւններուն բաժանումը:

1726. — Շղթայակիր շղթան կը հանէ իր վիզէն՝ Կարապետ Կաթողիկոսի հրամանաւ:

1727 Ապրիլ 2. — Լատինաց Եպիսկոպոսը այցի կուգայ իր թարգման՝ Լուքաքի հետ Հայոց պատրիարքարանը՝ Կարապետ Կաթողիկոսին: Կոլոտ կը դիմաւորէ, հանդիսաւորապէս: Հետեւեալ օրն իսկ Կաթողիկոսին փոխանորդը՝ փոխադարձ այցելութեան կ'երթայ:

1727. — Կոլոտ արքունի հրովարտակ կը հանէ Երուսաղէմայ Ս. Յակոբայ Տաճարը «նորապէս բռել, ծեփել եւ սպիտակացուցանել» ու համար: — Արքունի հրովարտակը անձամբ Երուսաղէմ՝ Շղթայակիրն՝ կը տանի բարեպաշտօն Սեդրեստրոս Երեւանենց:

1727. — Կոլոտ իւր ուղածին պէս «արդուհալ» մը կը գրէ եւ արքունի ճարտարապետ Սարգիս Խալֆային ձեռքով հրովարտակ հանել կուտայ Իւսկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցին հիմնովին վերաշինելու՝ նոյն ինք Սարգիս Խալֆայի ճարտարապետութեամբ:

1728. — Շղթայակիր մեծ շինութիւններով եւ բարեկարգութիւններով կը պայծառացրնէ Ս. Տեղերը. — Կոլոտ թանկագին զգեստներ կը նուիրէ Ս. Յակոբայ գանձարանին:

1729. — Մեծ հրդեհ Կ. Պոլսոյ. հրոյ ճարակ կ'ըլլան Պալատու Ս. Հրեշտակապետ Եկեղեցին, ինչպէս նաեւ Յունաց 13 Եկեղեցիները: